

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

2203 «ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՐԱՏՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՀՀ 4 - 09 - 001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Տեսական ուսուցում 26 ժամ

Գործնական աշխատանք 28 ժամ

Մուտքային մակարդակը՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները.
2. Բանավոր և գրավոր տեղեկատվություն կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին .
3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.
4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. Կատարել փաստաթղթավորում:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսումնառության և դասավանդման մոտեցումները պետք է ուսանողին օգնեն սահմանել իրենց ձեռքբերումները և ստացած հմտությունները կիրառել այլ համատեքստերում: Հաղորդակցության մոդուլի պրակտիկայի ծրագրերը պետք է այնպես կազմված լինեն, որ մի շարք առաջադրանքների միջոցով կիրառվեն հաղորդակցության նպատակային և բազմազան գործածության փոխկապակցված հմտություններ: Այս առաջադրանքները կարող են արտահայտել ուսանողների մասնագիտական հետաքրքրությունը կամ կարող են ավելի ընդհանրական բնույթի լինել: Խորհուրդ է տրվում, որ այս առաջադրանքները քննարկվեն և պլանավորվեն այնպես, որ գնահատման ենթակա արդյունքը ստեղծվի ընթացիկ աշխատանքների ընթացքում և ոչ թե առանձին վարժության շրջանակում: Հաղորդակցության մոդուլի մեջ ուսումնառությունը և դասավանդումը պետք է լինեն ակտիվ և ուսանողակենտրոն: Ուսանողը պետք է հնարավորություն ունենա պլանավորել և ինքնուրույն որոշումներ կայացնել, նախաձեռնություն և ինքնուրույնություն ցուցաբերել և միասնաբար աշխատել խմբերում: Ուսանողները պետք է ներգրավված լինեն այնպիսի գործողություններում, որտեղ հնարավոր լինի լեզուն օգտագործել իրական իրավիճակներում՝ իրական նպատակներով: Նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցել նախագծերում կամ հաղորդակցության մոդուլի ծրագրով սահմանված վարժություններում կամ այլ մասնագիտական և սոցիալական բնույթի գործողություններում: Բոլոր ամփոփիչ գնահատումների կարևորագույն մաս պետք է կազմի ուսանողներին տրված նորից գրելու, վերանայելու, կրկնելու հնարավորությունը: Ուսանողները պետք է ներգրավված լինեն իրենց կարողությունները ընդարձակող գործողություններում: Նպատակահարմար կլինի խմբային խաղերի իրագործումը:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները.

բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները.

գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կներկայացնի հակիրճ զեկույց, որտեղ կարտահայտի իր անձնական պատկերացումները ուսումնառության նպատակների և գործընթացների, ինչպես նաև ուսումնառության տարբեր եղանակների մասին: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ:

Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 4 ժամ

Գործնական աշխատանք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը.

բ. կատարված հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ.

գ. տեղեկատվության առանձնացում/ խմբավորումը նպատակային է կատարում.

դ. հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի որևէ պարզ թեմա և/կամ ոչ զեղարվեստական տեքստ, ըստ որի նա պետք է կազմի մեկ կամ մի քանի մասից բաղկացած գրավոր հաղորդում և կատարի բանավոր ներկայացում: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ, իսկ բանավոր ներկայացումը պետք է տևի մոտ մեկ րոպե: Լրացուցիչ ժամանակ պետք է տրամադրվի նաև հարցերի համար, և ուսանողը պետք է իր կարծիքը արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետների կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ:

Կատարման բոլոր չափանիշները պետք է ձեռք բերվեն և գրավոր, և բանավոր խոսքի ընթացքում միաժամանակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ

Գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները.

- պարզաբանումներ ստանալու ձգտումը
- գրառումներ կատարելը
- ամփոփելը

բ. ազատ ձևով ձևակերպում, արտահայտում, պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները.

գ. ցուցաբերում է համոզելու հստակություն.

դ. կատարում է ճիշտ ամփոփում (եզրափակում):

ԳԱՆՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Կներկայացվի տեքստ, որը նկարագրում է որևէ ոչ միանշանակ իրավիճակ, խնդիր և/կամ գաղափար: Ուսանողը կընդգրկվի երկու և/կամ ավելի հոգուց կազմված խմբում, որի անդամներից մեկը կարող է լինել դասավանդողը: Քննարկման համար տրվող առավելագույն ժամանակը 3 րոպե է (յուրաքանչյուր մասնակցի համար): Ուսանողը պետք է ամենաանհրաժեշտ տեղեկություն տա տեքստում առկա հարցերի մասին և խմբի անդամներին ներկայացնի իր տեսակետները և նկատառումները: Այն կարող է լինել մեկ տեսակի տեղեկատվություն և/կամ փաստացի նկարագրություն:

Գնահատման համար հատկապես պետք է ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Քննարկումը ըստ դասավանդողի հայեցողության կարող է փոխարինվել տրված թեմայով հարցազրույցի:

Բոլոր կատարման չափանիշներն էլ պետք է ձեռք բերվեն մեկ առաջադրանքի շրջանակում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է նախանշում սխեմաների աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և

նրանց միջև եղած տարբերությունները.

բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳԱՆՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել մեկական սխեմա, աղյուսակ, դիագրամ և նկար՝ դրանց մասին բանավոր հաղորդում կատարելուն վերաբերող հմտությունները ստուգելու նպատակով: Յուրաքանչյուր ներկայացումը պետք է տևի միջինը 1 րոպե: Լրացուցիչ ժամանակ կտրամադրվի մակ հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքը արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետի կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ:

Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը ըստ նրանց նշանակության.

- դիմում
- ինքնակենսագրություն(տրված տարբեր տեսակի ֆորմատներով)
- պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ
- արձանագրություն
- երաշխավորագիր և այլն

բ. Ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը.

գ. Ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳԱՆՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվեն կազմել տարբեր տեսակի փաստաթղթեր, ինչպիսիք են.

- դիմում
- ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ֆորմատներով)
- պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ
- արձանագրություն
- երաշխավորագիր
- վավերագիր և այլն

Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱԱՕ 4 - 09 - 001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը մշակվել է ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման ոլորտում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական պարապմունք 16 ժամ

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. պահպանել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ռադիոէլեկտրոնային սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքներն իրականացնելիս,
3. իմանալ ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները,
4. կատարել առաջին օգնության կազմակերպումը և կիրառել անհրաժեշտ միջոցներ:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, օրենքները և աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը, մեխանիզմները և նրանց խախտման հետ կապված պատասխանատվությունը,
- գ. ճիշտ է ներկայացնում տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ և դժբախտ դեպքերի ու պատահարների փաստաթղթավորման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է որոշակի եզրահանգումներ կատարել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում

6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Պահպանել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ռադիոէլեկտրոնային սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքները իրականացնելիս:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում և կիրառում էլեկտրոնային սարքավորումների շահագործման և վերանորոգման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- բ. ճիշտ է սահմանում և պահպանում էլեկտրաանվտանգության կանոնները,
- գ. ճիշտ է սահմանում և պահպանում հրդեհանվտանգության կանոնները:

ԳՆԱՅՍՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում

6 ժամ

Գործնական աշխատանք

6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքները դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները,
- վնասվածքներ էլեկտրական հոսանքից,
- այրվածքներ զոդման աշխատանքների ժամանակ,
- օրգանիզմի թունավորում,
- հնարավոր տարբեր վնասվածքներ:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումը կատարվելու է թեսթի միջոցով, որը պարունակելու է աշխատանքների թվարկումը և հնարավոր վնասվածքները: Նա պետք է նշի, թե որ իրավիճակներում ինչ վնասվածքներ են առաջանում: Առանձին հարցերով պարզաբանվելու է յուրաքանչյուր իրավիճակում վնասվածքները կանխելու և դրանցից պաշտպանվելու քայլերը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե թեսթի առաջադրանքը կատարվում է առնվազն 60 տոկոսով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական միջոցներ, ուսումնական գրականություն, տեսաֆիլմ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում

6 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել առաջին օգնության կազմակերպում և կիրառել անհրաժեշտ միջոցներ
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է կատարում առաջին օգնության կազմակերպումը, կիրառելով անհրաժեշտ միջոցներ,
- արհեստական շնչառություն և սրտի աշխատանքի վերականգնում էլեկտրահարման դեպքում,
- արյան հոսքի դադարեցում և վիրակապում բաց վնասվածքների դեպքում,
- այրվածքների մշակում,
- թունավորման ժամանակ օրգանիզմի հնարավոր մաքրում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ԴԱՍԻՉԸ՝ SԾ 4 - 08 - 001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը մշակվել է ուսանողներին ծրագրավորման հիմունքներ ուսումնասիրելու նախապատրաստման համար: Սոդուլը նախատեսված է ուսանողների մոտ ալգորիթմական մտածողությունը զարգացնելու, տարբեր բնագավառների խնդիրների լուծման ալգորիթմների ներկայացման եղանակները ուսումնասիրելու, ուսանողի տրամաբանությունը զարգացնելու համար:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

**Տեսական 14
Գործնական 16**

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝ 2 ՈՒՆԻ
ՀԱՏՈՒԿ ՊԱՅԱՆՋՆԵՐ՝ 2 ՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա ալգորիթմների նկարագրման եղանակները, ալգորիթմների հատկությունները, ալգորիթմների տրման ձևերը, ալգորիթմների տիպերը,
2. կարողանա կազմել ճյուղավորված ալգորիթմներ,
3. կարողանա կազմել զանգվածների մշակման ալգորիթմներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ալգորիթմների նկարագրման եղանակները, ալգորիթմների հատկությունները, ալգորիթմների տրման ձևերը, ալգորիթմների տիպերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Գիտի ալգորիթմի սահմանումը և նրա ներկայացման բոլոր եղանակները:

բ. Գիտի ալգորիթմի հատկությունները, տրման ձևերը և տիպերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի խնդիր, որի ալգորիթմը նա պետք է նկարագրի: Ուսանողը պետք է կարողանա ընտրել նկարագրման եղանակը և ալգորիթմի տիպը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ շարադրում է գործողությունների հաջորդականությունը և նշում ալգորիթմի ներկայացման եղանակն ու տիպը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ տալ ալգորիթմների հատկությունների, ներկայացման եղանակների և տիպերի մասին: Գործնական աշխատանքների ընթացքում դիտարկվելու են կոնկրետ խնդիրների ալգորիթմներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	2 ժամ
Գործնական աշխատանք	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ կազմել ճյուղավորված ալգորիթմներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կազմում խնդիրների ճյուղավորված ալգորիթմներ:

բ. ճիշտ է կազմում ցիկլային ալգորիթմներ:

գ. Կարողանում է գնահատել ալգորիթմի տարրական գործողությունների քանակը:

դ. Կարողանում է գնահատել ալգորիթմի զուգամետությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կառաջադրվի խնդիր, որի ալգորիթմը նա պետք է կազմի, շտկի և գնահատի: Ուսանողը պետք է կարողանա նաև ալգորիթմը ներկայացնել այլ եղանակով: Արդյունքը կհամարվի բավարար ձեռք բերված, եթե ուսանողը կարողացել է կազմել առաջադրված խնդրի ալգորիթմը, կարող է գնահատել դրա ճշտությունը և կատարվող գործողությունների քանակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի և կազմի տիպային և ոչ ստանդարտ խնդիրների ալգորիթմներ և կարողանա գնահատել դրանք: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, խնդրագրքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	4 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ կազմել զանգվածների մշակման ալգորիթմներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. Գիշտ է հասկանում զանգվածի սահմանումը և կիրառման ոլորտները:
- բ. Գիշտ է օգտագործում միաչափ զանգվածները (վեկտորներ):
- գ. Գիշտ է օգտագործում երկչափ զանգվածները (մատրից):
- դ. Կարողանում է կազմել վեկտորների մշակման խնդիրների ալգորիթմներ:
- ե. Կարողանում է կազմել մատրիցների մշակման խնդիրների ալգորիթմներ:
- զ. Գիշտ է գնահատում կազմված ալգորիթմների զուգամետությունը և գործողությունների քանակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի խնդիր, որի լուծումը բերվում է վեկտորների և մատրիցների մշակման ալգորիթմների: Ուսանողը պետք է կարողանա ճշգրիտ կազմել ալգորիթմը և դա գնահատել: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը կարողացել է կազմել առաջադրված խնդրի ալգորիթմը և կգնահատի դրա ճշտությունը և կատարվող գործողությունների քանակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի կազմել զանգվածների տիպային և ոչ ստանդարտ խնդիրների ալգորիթմներ և գնահատել դրանք: Տիպային խնդիրներից ամենակարևորներն են համարվում վեկտորների և մատրիցների մեծագույն և փոքրագույն տարրերի որոնումը, զանգվածների կարգավորումը, տարրերի միջին քվադրատիկ հաշվարկը և այլն: Յուրաքանչյուր ուսանող պետք է գործնական պարապմունքների ընթացքում լուծի բազմաբնույթ խնդիրներ, գնահատելով կազմած ալգորիթմների ճշտությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	8 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ " ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ"

ԴԱՍԻՉԸ՝ SԾ 4 – 08 - 002

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը մշակվել է ծրագրավորման բարձր մակարդակի լեզուների հիմնական հնարավորությունները ուսումնասիրելու համար: Սոդուլը նախատեսված է ծրագրի կառուցվածքը, տվյալների տիպերը, դասակարգումն ուսումնասիրելու համար՝ օգտագործելով լեզվի քերականությունը և կոնկրետ ծրագրեր ստեղծելու, կարգավորելու և արդյունքները գնահատելու հրահանգները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

**Տեսական 14
Գործնական 16**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի "Ալգորիթմների հիմունքներ" մոդուլը:

ՀԱՏՈՒԿ ՊԱՅԱՆՋՆԵՐ՝

ՉՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա ծրագրի կառուցվածքը, տվյալների տիպերը, դրանց ներկայացումը, ներածման և արտածման հնարավորությունները,
2. իմանա օգտագործվող ստանդարտ ֆունկցիաները, վերագրման հնարավորությունները,
3. իմանա ծրագրավորման լեզվում ճյուղավորումների և ցիկլերի կազմման հնարավորությունները և կարողանա կազմել համապատասխան ծրագրեր,
4. կարողանա ընտրված ծրագրային միջավայրում կազմել զանգվածների մշակման ալգորիթմների ծրագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ծրագրի կառուցվածքը, տվյալների տիպերը, դրանց ներկայացումը, ներածման և արտածման հնարավորությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. Գիտի ծրագրավորման լեզվի կառուցվածքը, տվյալների տիպերը և դասակարգումը:
- բ. Գիտի ծրագրավորման լեզվի քերականությունը:
- գ. Գիտի ներածման և արտածման հնարավորությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի մաթեմատիկական մոդել, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ճգրիտ ներկայացնել: Ուսանողը պետք է ճշգրիտ ապահովի ծրագրի տվյալների ներածման և արտածման հրահանգավորումը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ շարադրում է տվյալների ներկայացման հրահանգները և ապահովում դրանց ներածումն ու արտածումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ տալ ծրագրի կառուցվածքի, տվյալների տիպերի, դրանց ներկայացման, ինչպես նաև ներածման և արտածման հնարավորությունների մասին: Լաբորատոր աշխատանքների կատարման ընթացքում դիտարկվելու են կոնկրետ խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	4 ժամ
Լաբորատոր աշխատանք	3 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 2. Իմանալ օգտագործվող ստանդարտ ֆունկցիաները, վերագրման հնարավորությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. Գիտի օգտագործվող բոլոր ստանդարտ ֆունկցիաները:
- բ. Ճիշտ է կատարում ստանդարտ ֆունկցիաների հետ կապված գործողությունները:
- գ. Գիտի վերագրման հնարավորությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կառաջադրվի խնդիր, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ներկայացնել ստանդարտ ֆունկցիաներով:

Ուսանողը պետք է ճշգրիտ ապահովի օգտագործվող ստանդարտ ֆունկցիաները, դրա հետ կապված գործողությունները և վերագրման հնարավորությունները: Արդյունքը կհամարվի բավարար ձեռք բերված, եթե ուսանողը կարողացել է իրականացնել առաջադրված խնդիրը ստանդարտ ֆունկցիաներով, կարող է գնահատել դրա ճշտությունը, կատարվող գործողությունների քանակը և վերագրման հնարավորությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի կիրառել ստանդարտ ֆունկցիաները և վերագրման հնարավորությունները, կատարի խնդիրների լուծման գնահատում: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է ուսումնական գրականություն, խնդրագրքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	4 ժամ
Լաբորատոր աշխատանք	3 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 3. Իմանալ ծրագրավորման լեզվում ճյուղավորումների և ցիկլերի կազման հնարավորությունները և կարողանալ կազմել համապատասխան ծրագրեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. Ճիշտ է կազմում ճյուղավորման ծրագրեր:
- բ. Ճիշտ է կազմում ցիկլային ծրագրեր:
- գ. Կարողանում է գնահատել ճյուղավորումների և ցիկլերի կազման տարրական գործողությունների քանակը:
- դ. Կարողանում է կազմել համապատասխան ծրագրեր:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կառաջադրվի ճյուղավորման և ցիկլերի կազման խնդիր, որի ծրագիրը նա պետք է մշակի և շտկի: Ուսանողը պետք է նաև կարողանա ներկայացնել ծրագիրը մատչելի եղանակով: Արդյունքը կհամարվի բավարար ձեռք բերված, եթե ուսանողը կարողացել է իրականացնել առաջադրված խնդրի ծրագիրը և գնահատել դրա ճշտությունը և կատարվող գործողությունների քանակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի և կատարի ճյուղավորման և ցիկլերի կազման խնդիրների մշակում և գնահատում: Ուսուցման ընթացքում օգտագործվելու է խնդրագրքեր և գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն 3 ժամ
Լաբորատոր աշխատանք 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ ընտրված ծրագրային միջավայրում կազմել զանգվածների մշակման ալգորիթմների ծրագրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Գիշտ է հասկանում զանգվածը, նրա սահմանումը և կիրառման ոլորտները:
- բ. Գիշտ է օգտագործում միաչափ (վեկտորներ) զանգվածները:
- գ. Գիշտ է օգտագործում երկչափ (մատրից) զանգվածները:
- դ. Կարողանում է կազմել վեկտորների մշակման խնդիրների ալգորիթմների ծրագրերը:
- ե. Կարողանում է կազմել մատրիցների մշակման խնդիրների ալգորիթմների ծրագրերը:
- զ. Գիշտ է գնահատում կազմված ալգորիթմների գործողությունների քանակը և զուգամետությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվի վեկտորների և մատրիցների մշակման ալգորիթմներին առընչվող խնդիր: Ուսանողը պետք է կարողանա ճշգրիտ կազմել դրա ծրագիրը և դա գնահատել: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը կարողացել է իրականացնել առաջադրված խնդրի ծրագրերը և գնահատել դրա ճշտությունն ու կատարվող գործողությունների քանակը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի և կազմի տիպային և ոչ ստանդարտ զանգվածների խնդիրների ծրագրեր և դա գնահատել: Տիպային խնդիրներից ամենակարևորներն են համարվում վեկտորների և մատրիցների մեծագույն և փոքրագույն տարրերի որոնումը, զանգվածների կարգավորումը, տարրերի միջին թվաբանականի հաշվարկը և այլն: Յուրաքանչյուր ուսանող պետք է ուսուցման ընթացքում կազմի բազմաբնույթ խնդիրների ծրագրեր, գնահատելով կազմած ալգորիթմների ճշտությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն 3 ժամ
Լաբորատոր աշխատանք 5 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ “ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ”

ԴԱՄԻՉԸ` ՏԾ 4 - 08 - 003

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը մշակվել է ծրագրավորման բարձր մակարդակի լեզուներում ենթածրագրեր կառուցելու հմտություններն ուսումնասիրելու համար: Մոդուլը նախատեսում է կազմել ենթածրագրերի կիրառմամբ ծրագրեր` օգտագործելով լեզվի քերականությունը և կոնկրետ ծրագրեր ստեղծելու հրահանգները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ`

**Տեսական 14
Գործնական 16**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի “Ծրագրավորման հիմունքներ” մոդուլը:

ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ`

ՉՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա սահմանել նոր տիպեր և ներկայացնել դրանք,
2. իմանա ֆունկցիաները, նրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը,
3. իմանա պրոցեդուրաները, դրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը,
4. կարողանա ենթածրագրերը կիրառել հիմնական ծրագրի մեջ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ սահմանել նոր տիպեր և ներկայացնել դրանք:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Գիտի սահմանել նոր տիպեր:
- բ. Գիտի նոր տիպերի ներկայացնելը:
- գ. Գիտի նոր տիպերի դաշտերը և համապատասխան տիպերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվի խնդիր, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ճգրիտ ներկայացնել: Ուսանողը պետք է ճշգրիտ ապահովի ծրագրի նոր տիպի հրահանգավորումը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ շարադրում է նոր տիպը, նրա դաշտերի ներկայացումը և ապահովում է դրանց ներածումն ու արտածումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ տալ ծրագրում նոր տիպերի և դրանց ներկայացման, ինչպես նաև ներածման և արտածման հնարավորությունների վերաբերյալ: Լաբորատոր աշխատանքների կատարման ընթացքում դիտարկվելու են խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	4 ժամ
Լաբորատոր աշխատանք	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ ֆունկցիաները, դրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Գիտի ֆունկցիաների հայտարարելը:
- բ. Գիտի ֆունկցիաների ներկայացնելը:
- գ. Գիտի ֆունկցիաների աշխատանքի սկզբունքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կառաջադրվի խնդիր, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ներկայացնել ֆունկցիաներով: Ուսանողը պետք է ճշգրիտ ապահովի օգտագործվող ֆունկցիաները, նրա հետ կապված գործողությունները և վերադարձվող արժեքները:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռք բերված, եթե ուսանողը կարողացել է իրականացնել առաջադրված խնդիրը ֆունկցիաներով և գնահատել նրանց աշխատանքի սկզբունքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է ուսումնասիրի ֆունկցիաները, նրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը: Ուսուցման և գործնական աշխատանքների ընթացքում դիտարկվելու են կոնկրետ խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	3 ժամ
Լաբորատոր աշխատանք	3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ պրոցեդուրաները, դրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Գիտի պրոցեդուրաների հայտարարելը:
- բ. Գիտի պրոցեդուրաների ներկայացնելը:
- գ. Գիտի պրոցեդուրաների աշխատանքի սկզբունքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կառաջադրվի խնդիր, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ներկայացնել պրոցեդուրաներով:

Ուսանողը պետք է ճշգրիտ ապահովի օգտագործվող պրոցեդուրաները, դրա հետ կապված գործողությունները և վերադարձվող արժեքները: Արդյունքը կհամարվի բավարար ձեռք բերված, եթե ուսանողը կարողացել է իրականացնել առաջադրված խնդիրները պրոցեդուրաներով և զնահատել դրա աշխատանքի սկզբունքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է ուսումնասիրի պրոցեդուրաները, դրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը: Ուսուցման ընթացքում դիտարկվելու են կոնկրետ խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

- | | |
|--------------------|-------|
| Դասախոսություն | 3 ժամ |
| Լաբորատոր աշխատանք | 5 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ ենթադրագրերը կիրառել հիմնական ծրագրի մեջ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Գիտի ենթադրագրի անհրաժեշտությունը:
- բ. Կարողանում է բաժանել ծրագիրը մոդուլների:
- գ. Ճիշտ է օգտագործում գրադարանային ենթադրագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կառաջադրվի խնդիր, որի ծրագրային նկարագրման մասը անհրաժեշտ է ներկայացնել ենթադրագրերով:

Ուսանողը պետք է ճիշտ ընտրի ենթադրագրի տիպը, փոխանցվող փոփոխականները և տեղադրի ենթադրագիրը:

Համապատասխան թեստերի միջոցով ստուգվում են ամբողջ ծրագրի և առանձին ենթադրագրերի ելքային պարամետրերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է ուսումնասիրի ենթադրագրերը, դրանց հայտարարելը, ներկայացնելը և աշխատանքի սկզբունքը: Ուսուցման ընթացքում դիտարկվելու են կոնկրետ խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

- | | |
|--------------------|-------|
| Դասախոսություն | 4 ժամ |
| Լաբորատոր աշխատանք | 6 ժամ |

ԴԱՍԻՉԸ՝ ՏԾ 4 - 08 - 004

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է ուսանողներին ծանոթացնելու մաթեմատիկական անալիզի հիմնական հասկացություններին (սահմանների տեսություն, անընդհատություն, ածանցյալ, դիֆերենցիալ և անորոշ ինտեգրալ): Սողուլի նպատակը ուսանողների մոտ ծրագրավորման և ալգորիթմական լեզուների ուսումնասիրման համար անհրաժեշտ մաթեմատիկական մեթոդների, բանաձևերի ու հնարանքների բազայի ձևավորումն ու զարգացումն է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՉԵՎԸ՝

Տեսական 36
Գործնական 36

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Անալիտիկ երկրաչափության տարրեր» մոդուլը:

ՀԱՏՈՒԿ ՊԱՅԱՆՋՆԵՐ՝

ՉՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա հաջորդականության և ֆունկցիայի սահմանի գաղափարը, դրանց սահմանումներն ու հատկությունները,
2. կարողանա սահմանել ֆունկցիայի անընդհատությունը կետում և միջակայքում, ձևակերպել փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի հատկությունները,
3. իմանա ֆունկցիայի ածանցյալի և դիֆերենցիալի սահմանումները և դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների ձևակերպումները,
4. կարողանա հետազոտել ֆունկցիան և կառուցել նրա գրաֆիկը,
5. իմանա հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը և ինտեգրման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ հաջորդականության և ֆունկցիայի սահմանի գաղափարը, դրանց սահմանումներն ու հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Գիտի հաջորդականության և ֆունկցիայի սահմանի սահմանումը,
- Կարողանում է կատարել գործողություններ վերջավոր սահման ունեցող հաջորդականությունների հետ,
- Գիտի մոնոտոն հաջորդականության սահմանի գոյության ու միակության թեորեմը,
- Կարողանում է կատարել գործողություններ վերջավոր սահման ունեցող ֆունկցիաների հետ,
- Կարողանում է հաշվել սահմաններ, բացել անորոշություններ,
- Գիտի առաջին և երկրորդ նշանավոր սահմանները, e թիվը,
- Կարողանում է բաղդատել անվերջ փոքրերը, նրանց օգնությամբ հաշվել սահմաններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին և երրորդ կետերում նշված

հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների երկրորդ և չորրորդից յոթերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	8 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ սահմանել ֆունկցիայի անընդհատությունը կետում և միջակայքում, ձևակերպել փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի ֆունկցիայի անընդհատություն սահմանումը կետում և միջակայքում,
- Կարողանում է ձևակերպել Վայերշտրասի թեորեմը փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի մասին,
- Կարողանում է ձևակերպել Կոշու թեորեմը փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի մասին,
- Գիտի աջակողմյան և ձախակողմյան անընդհատությունների ձևակերպումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է հարցումը, ինչպես նաև ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը. որը պարունակում է կատարման չափանիշների բաժնում նշված ձևակերպումների վերաբերյալ չորս ենթահարց-պնդումներ: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ: Մեխանիկական սերտումից խուսափելու նպատակով ուսանողին առաջարկվում է կոնկրետ ֆունկցիաների օրինակների վրա ցուցադրել ձեռք բերված կարողությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	4 ժամ
Գործնական աշխատանք	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ ֆունկցիայի ածանցյալի և դիֆերենցիալի սահմանումները և դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների ձևակերպումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի ֆունկցիայի ածանցյալի սահմանումը,
- Պատկերացնում է ածանցյալի երկրաչափական և ֆիզիկական իմաստները,
- Կարողանում է կազմել կորի շոշափողի հավասարումը,
- Հասկանում է անընդհատության և ածանցելիության կապը,
- Գիտի հիմնական տարրական ֆունկցիաների ածանցյալների աղյուսակը,
- Կարողանում է հաշվել բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալները,
- Կարողանում է հաշվել բարձր կարգի ածանցյալներ,
- Գիտի ֆունկցիայի դիֆերենցիալի սահմանումը,
- Գիտի ֆունկցիայի դիֆերենցիալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը,

- Գիտի դիֆերենցիալի հաշվման բանաձևը,
- Կարողանում է ձևակերպել Ռոլլի և Լագրանժի թեորեմները և տալ նրանց երկրաչափական իմաստը,
- Գիտի Թեյլորի բանաձևը,
- Կարողանում է Լոպիտալի կանոնով բացել անորոշություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ Ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է ինն ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ և ութից տասներկուերորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների երրորդ, վեցերորդ, յոթերորդ և տասներեքերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպորինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	8 ժամ
Գործնական աշխատանք	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ հետազոտել ֆունկցիան և կառուցել նրա գրաֆիկը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի ֆունկցիայի էքստրեմումի սահմանումը և նրա գոյության անհրաժեշտ ու բավարար պայմանները,
- Կարողանում է որոշել ֆունկցիայի աճման և նվազման միջակայքերը,
- Կարողանում է պարզել ֆունկցիայի ուռուցիկությունը կետում և միջակայքում և որոշել նրա բնույթը,
- Գիտի շրջման կետի գոյության անհրաժեշտ պայմանը և կարողանում է գտնել շրջման կետերը,
- Կարողանում է գտնել ֆունկցիայի գրաֆիկի ուղղաձիգ և թեք ասիմպտոտները,
- Կարողանում է գտնել ֆունկցիայի մեծագույն ու փոքրագույն արժեքները փակ միջակայքում,
- Գիտի ֆունկցիայի հետազոտման և գրաֆիկի կառուցման ընդհանուր սխեման:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց տրվում է ֆունկցիայի հետազոտման և գրաֆիկի կառուցման առաջադրանք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպորինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	6 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իմանալ հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը և ինտեգրման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի նախնական ֆունկցիայի և անորոշ ինտեգրալի սահմանումները,
- Գիտի անորոշ ինտեգրալի հատկությունները,
- Գիտի հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը,
- Կարողանում է փոփոխականի փոխարինման մեթոդով կատարել ինտեգրում,
- Գիտի մասերով ինտեգրման մեթոդը և կարողանում է այն կիրառել,
- Կարողանում է ռացիոնալ կոտորակները ներկայացնել պարզ կոտորակների գումարի տեսքով և գտնել անորոշ գործակիցները,
- Կարողանում է ինտեգրել պարզագույն ռացիոնալ կոտորակները,
- Կարողանում է ինտեգրել եռանկյունաչափական և որոշ իռացիոնալ արտահայտություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երկրորդ և երրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների չորրորդի ութերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպորինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	10 ժամ
Գործնական աշխատանք	10 ժամ

ԴԱՍԻՉԸ՝ ՏԾ 4 - 08 - 005

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է ուսանողներին ծանոթացնելու վեկտորական հանրահաշվի և անալիտիկ երկրաչափության հիմնական հասկացություններին: Սողուլի նպատակը ուսանողների մոտ կողողինատների մեթոդով և վեկտորների կիրառմամբ երկրաչափական խնդիրների լուծման կարողությունների զարգացումն է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵԿԸ՝

**Տեսական 30
Գործնական 30**

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝ 2 ՈՒՆԻ

ՀԱՏՈՒԿ ՊԱՅԱՆՋՆԵՐ՝ 2 ՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա հիմնական հասկացությունների սահմանումներն ու հատկությունները,
2. կարողանա վեկտորների կիրառմամբ լուծել երկրաչափական խնդիրներ,
3. իմանա ուղիղ գծի, հարթության և երկրորդ կարգի կորերի հավասարումները,
4. կարողանա կողողինատների մեթոդի օգնությամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ հիմնական հասկացությունների սահմանումներն ու հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Գիտի վեկտորի սահմանումը, կարողանում է կատարել գծային գործողություններ վեկտորների հետ,
- Կարողանում է հաշվել վեկտորների սկալյար, վեկտորական և խառը արտադրյալները,
- Կարողանում է հաշվել վեկտորների կազմած անկյունը, գտնել մի վեկտորի պրոյեկցիան մյուսի ուղղության վրա, պարզել երկու վեկտորների համագիծ կամ փոխուղղահայաց լինելը,
- Կարողանում է տրված կողողինատներով հաշվել վեկտորի երկարությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երկու ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին և երրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջինից չորրորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Նպատակահարմար է կիրառել տիպորինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն

8 ժամ

Գործնական աշխատանք

8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ վեկտորների կիրառմամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Կարողանում է հատվածը բաժանել տրված հարաբերությամբ,
- Վեկտորական արտադրյալի օգնությամբ հաշվում է եռանկյան մակերեսը,
- Կարողանում է հարթ պատկերների հայտնի գագաթների տրված կոորդինատներով գտնել անհայտ գագաթների կոորդինատները, կողմերի և անկյունագծերի երկարությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է կարճ պատասխանով առաջադրանքը. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների բաժնում նշված կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն

6 ժամ

Գործնական աշխատանք

8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ ուղիղ գծի, հարթության և երկրորդ կարգի կորերի հավասարումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի ուղիղ գծի հավասարումների տարբեր տեսքերը (ընդհանուր, վեկտորական, նորմալ, տրված երկու կետերով անցնող, տրված ուղղությամբ և տրված կետով անցնող) և կարողանում է կազմել դրանք,
- Կարողանում է կառուցել ուղիղը ըստ տրված հավասարման,
- Գիտի տարածության մեջ ուղիղ գծի և հարթության հավասարումները,
- Գիտի շրջանագծի, էլիպսի, պարաբոլի և հիպերբոլի կանոնական հավասարումները,
- Կարողանում է գտնել կանոնական հավասարումով տրված շրջանագծի շառավիղը և կենտրոնի կոորդինատները, էլիպսի կիսաառանցքները, պարաբոլի ճյուղերի ուղղությունը, հիպերբոլի ասիմպտոտները, ինչպես նաև նրանց կիզակետերի կոորդինատները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երրորդ և չորրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների երկրորդ և հինգերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	8 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ կորդինատների մեթոդի օգնությամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Կարողանում է պարզել երկու ուղիղների, ուղղի և հարթության փոխադարձ դասավորությունը,
- Կարողանում է հաշվել կետի հեռավորությունը ուղղից և հարթությունից,
- Կարողանում է գրել տրված նորմալ վեկտորն ունեցող և տրված կետով անցնող հարթության հավասարումը, հետագոտել հարթության ընդհանուր հավասարումը և այն բերել նորմալ տեսքի:
- Կարողանում է գրել երեք կետերով անցնող հարթության հավասարումը,
- Կարողանում է գտնել կետի հեռավորությունը հարթությունից:
- Կարողանում է պարզել հարթությունների փոխադարձ դասավորությունը և գտնել նրանց կազմած անկյունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջինից հինգերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	8 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

ԴԱՍԻՉԸ՝ ՏԾ 4 - 08 - 006

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է ուսանողներին ղիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառություններին ծանոթացնելու համար: Մոդուլի նպատակը ուսանողների մոտ գործնական խնդիրների լուծման ժամանակ ղիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառման, ինչպես նաև շարքերի օգնությամբ մոտավոր հաշվումների և դրանց սխալի գնահատման հմտությունների զարգացումն է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝

**Տեսական 38
Գործնական 34**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Մաթեմատիկական անալիզի հիմունքներ» մոդուլը:

ՀԱՏՈՒԿ ՊԱՐԱՆՁՆԵՐ ԶՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա Նյուտոն-Լայբնիցի բանաձևով հաշվել որոշյալ ինտեգրալներ, ինչպես նաև հարթ պատկերի մակերեսը և պտտման մարմնի ծավալը,
2. կարողանա գտնել ղիֆերենցիալ հավասարման մասնավոր լուծումը, որը բավարարում է տրված սկզբնական պայմաններին,
3. կարողանա լուծել երկրորդ կարգի գծային և անհամասեռ ղիֆերենցիալ հավասարումներ,
4. իմանա թվային շարքերի զուգամիտության հայտանիշները և կարողանա դրանց օգնությամբ պարզել շարքի զուգամիտության հարցը,
5. կարողանա գտնել աստիճանային շարքի զուգամիտության տիրույթն ու շառավիղը, գրել որոշ ֆունկցիաների վերլուծությունը Մակլորենի շարքի միջոցով, ինչպես նաև կատարել մոտավոր հաշվումներ շարքերի օգնությամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 Կարողանալ Նյուտոն-Լայբնիցի բանաձևով հաշվել որոշյալ ինտեգրալներ, ինչպես նաև հարթ պատկերի մակերեսը և պտտման մարմնի ծավալը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Գիտի որոշյալ ինտեգրալի սահմանումը և հատկությունները,
- Գիտի միջին արժեքի թեորեմը,
- Գիտի Նյուտոն-Լայբնիցի բանաձևը,
- Կարողանում է հաշվել որոշյալ ինտեգրալներ փոփոխականի փոխարինման մեթոդով,
- Կարողանում է հաշվել որոշյալ ինտեգրալներ մասերով ինտեգրման մեթոդով,
- Կարողանում է հաշվել հարթ պատկերի մակերեսը,
- Կարողանում է հաշվել պտտման մարմնի ծավալը,
- Գիտի առաջին սեռի անիսկական ինտեգրալի սահմանումը,
- Կարողանում է առաջին սեռի անիսկական ինտեգրալներ հաշվել:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին առաջարկվելու են խնդիրներ համապատասխան շտեմարանից որոշյալ ինտեգրալներ հաշվելու համար: Նա պետք է ճշգրիտ հաշվի որոշյալ ինտեգրալները օգտագործելով փոփոխականի

փոխարինման մեթոդը և մասերով ինտեգրման մեթոդը: Ուսանողին առաջարկվելու են նաև խնդիրներ տարբեր մարմինների ծավալների հաշվման վերաբերյալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսումնասիրվելու են տիպային խնդիրների լուծումները: Օգտագործվելու են համապատասխան հաշվարկային ծրագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	10 ժամ
Գործնական պարապմունք	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ գտնել դիֆերենցիալ հավասարման մասնավոր լուծումը, որը բավարարում է տրված սկզբնական պայմաններին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի դիֆերենցիալ հավասարման սահմանումը և հիմնական հասկացությունները (կարգ, լուծում, ընդհանուր լուծում, սկզբնական պայմաններ, մասնավոր լուծում),
- Ձևակերպում է Կոշու խնդիրը և նրա լուծման գոյության ու միակության բավարար պայմանը,
- Կարողանում է լուծել անջատվող փոփոխականներով դիֆերենցիալ հավասարումներ,
- Կարողանում է լուծել առաջին կարգի գծային դիֆերենցիալ հավասարումներ,
- Կարողանում է լուծել երկրորդ կարգի գծային հավասարումներ, որոնք թույլ են տալիս կարգի իջեցում,
- Կարողանում գտնել դիֆերենցիալ հավասարման` տրված սկզբնական պայմաններին բավարարող մասնավոր լուծումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին առաջարկվելու են դիֆերենցիալ հավասարումներ համապատասխան շտեմարանից և խնդրագրքերից: Նա պետք է ճշգրիտ լուծի այդ հավասարումները և ցուցաբերի տեսական գիտելիքներ դիֆերենցիալ հավասարումների հիմնական հասկացությունների և Կոշու խնդրի վերաբերյալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսումնասիրվելու են տիպային խնդիրների լուծումները: Օգտագործվելու են համապատասխան հաշվարկային ծրագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն	6 ժամ
Գործնական պարապմունք	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ լուծել երկրորդ կարգի գծային և անհամասեռ դիֆերենցիալ հավասարումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Գիտի Վրոնսկու որոշիչը,
- Գիտի երկրորդ կարգի գծային հաստատուն գործակիցներով համասեռ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծման կառուցվածքը,
- Գիտի երկրորդ կարգի գծային հաստատուն գործակիցներով անհամասեռ դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծման կառուցվածքը,
- Կարողանում է գտնել անհամասեռ դիֆերենցիալ հավասարման լուծումը աջ մասի որոշ հատուկ դեպքերի համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երկրորդ և երրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների երկրորդից չորրորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսումնասիրվելու են տիպային խնդիրների լուծումները: Օգտագործվելու են համապատասխան հաշվարկային ծրագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն	6 ժամ
Գործնական պարապմունք	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ թվային շարքերի զուգամիտության հայտանիշները և կարողանա դրանց օգնությամբ պարզել շարքի զուգամիտության հարցը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Գիտի շարքի գումարի, զուգամիտության և տարամիտության սահմանումները,
- Գիտի շարքի զուգամիտության անհրաժեշտ պայմանը,
- Կարողանում է ցույց տալ հարմոնիկ շարքի տարամիտությունը,
